ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

ԴԱՍ 4.1. Աշխարհագրական դիրքը և սահմանները: Երկրաբանությունը, օգտակար հանածոները

• • •

Երկրաբանական կառուցվածքը, մակերևույթը և օգտակար հանածոները: Մայրցամաքի հիմքում ընկած է **Աֆրիկա-Արաբական հնագույն պլատֆորմը** (ֆրանսերենից թարգմանած՝ plate- հարթ և forme-ձև): Պլատֆորմները երկրակեղևի ընդարձակ, մինչքեմբրյան հասակի, կարծր, բյուրեղային հիմք ունեցող ունեցող և հիմնականում փոխակերպային ծագում ունեցող ապարներից կազմված տեղամասեր են:

Երկրագնդի ցամաքը մի ժամանակ միասնական է եղել և կոչվել է **Պանգեա** (թարգմանաբար՝ համընդհանուր երկիր): Այն շրջապատված է եղել **Պանթալաս** (համընդհանուր օվկիանոս) օվկիանոսով: Պանգեա գերմայրցամաքի մասնատման արդյունքում ձևավորվել են ժամանակակից մայրցամաքները: Պանգեա Հին կյանքի դարաշրջանում (Պալեոզոյան) և Միջին կյանքի (Մեզոզոյ) սկզբում տրոհվել է երկու խոշոր ցամաքային բեկորների՝ հյուսիսային կիսագնդում՝ **Լավրասիա**, հարավայինում՝ **Գոնդվանա**, որոնք բաժանվել են հնագուն **Թետիս** օվկիանոսով:

• • •

Արևելաաֆրիկյան մեծ բեկվածքների գոտին մայրցամաքի ռելիեֆում արտահայտված է կոտրվածքներով, նեղ, խոր իջվածքներով: Կոտրվածքների երկայնքնով ձգվում են բազմաթիվ գործող և նիրհած հրաբուխներ, իսկ իջվածքներում տարածվում են, խոր և երկարաձգված բազմաթիվ գրաբենային լճեր:

Աֆրիկական պլատֆորմն է պատճառը,որ մայրցամաքի մակերևույթը ընդհանուր առմամբ հարթ է և թույլ մասնատված: Մակերևույթում գերակշռում են 200-ից 1000մ բարձրություն ունեցող սեղանակերպ աստիճանակերպ և հարթավայրերը: Ծայրամասերը ներքին շրջանների համեմատ բարձրադիր են: Մայրցամաքի միջին բարձրությունը 750 մ է, որով զիջում է Ասիային (950մ):

• • •

Մայցամաքի հարավում գտնվող **Կապի** լեռները առաջացել են Պալեոզոյում: Մնացյալ ցամաքի հիմքում գրեթե ամբողջությամբ Աֆրիկա-Արաբական հնագույն (մինչքեմբրյան) պլատֆորմն է: Մայրցամաքի հարավ-արևելքում հին, քայքայված Դրակոնյան լեռներն են: Բարձրավանդակներից նշանավոր են Եթովպականը(արևելքում, 1800-2000մ միջին բարձրությամբ), **Տիբեստի** և **Ահագարի** բարձրավանդակները՝ Կենտրոնական Սահարայում: Նշանավոր հարթավայրերից են Արևելաաֆրիկյան սարահարթը, Կոնգոյի (Կոնգոյի ավազան) և **Կալահարիի** գոգավորությունները: Մայրցամաքի ամենացածր կետը Կարմիր ծովի ափամերձ գոտում գտնվող **Ասսալ** լճի իջվածքն է՝ -153մ(փոքրիկ Ջիբութի պետության տարածքում):

Մայրցամաքի երկրաբանական զարգացման պատմությամբ էլ պայմանա-վորված են վառելիքային,մետաղական և ոչ մետաղական օգտակար հանա-ծոների բացառիկ պաշարները: Ընդերքն հարուստ է օգտակար հանածոների գրեթե բոլոր հայտնի տեսակների պաշարներով (տես՝ օգտակար հանածո-ների քարտեզը): Կան ոչ միայն հարուստ հանքավայրեր, այլև տասնյակ և հարյուրավոր կիլոմետրերով ձգվող հանքագոտիներ:

• • •

Նավթի և գազի հաստատված պաշարներով Աֆրիկան զիջում է Մերձավոր և Միջին Արևելքին, ինչպես նաև Ամերիկային: Նավթի պաշար-ները կազմում են են 8 մլրդ. տ (համաշխարհայինի մոտ 10%-ը), գազի պա-շարները՝ 6 տրլն խմ. (հիմնականում մեթանային կազմով, համաշխարհային պաշարների 12.5%-ը): Սրանց հիմնական շրջաններն են Միջերկրածովյանը՝ Լիբիա, Ալժիր, Եգիպտոս, Թունիս և Արևմտյան Աֆրիկան՝ Գվինեա-կան ծոցի ավազանի երկրներ՝ Նիգերիա, Գաբոն , Կոնգո, ԿԴՀ, Անգոլա: Նավթագազային մեծ հեռանկարներ ունեն Միջերկրածովյան, ինչպես նաև Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների շելֆային (մայրցամաքային ծան-ծաղուտ) գոտիները: Քարածխի հետախուզված պաշարները կազմում են մոտ 200 մլրդ. տ, որի 80%-ը ՀԱՀ-ում է:

• • •

Տարբերում են ոսկերչական (380 մլն. կարատ,որի վերամշակումից ստա-նում են ադամանդ) և տեխնիկական ալմաստներ(կտրող, հատող գործիք-ներ): Ալմաստների արմատական հանքավայրերը կապված են քիմբեռլի-տային հրաբխային փողակների հետ,որոնք առաջացել են երկրակեղևում

կուտակված գազերի պայթյունների արդյունքնում: Դրանք հիմնականում գտնվում են Անգոլայում, ՀԱՀ-ում, Տանզանիայում, Նամիբիայում:

Մայրցամաքում շատ են նաև զմրուխտի, ռուբինի, շողակնի, ալեքսանդ-րիտի ցրոն հանքավայրերը:

• • •

Հռոմը այդպես անվանեց այն երկրամասը, որը զավթել էր մ.թ.ա II դա-րում: Երկրամասը **Կարթագեն** (ներկայիս Թունիսի տարածքում) պետութ-յան տեղում էր: Այն մ.թ.ա I դարում հռոմեական բազում արշավանքների արդյունքում ընդարձակվեց՝ վերածվելով Հռոմեական կայսրության սեռա-տական երկրամասի: Այն ամբողջ Իտալիայի համար ծառայում էր որպես հացի շտեմարան: Հարկ է նշել, որ բերբերական ցեղերը համառ պայքար էին մղում ինչպես գաղութարարների, այնպես էլ՝ տեղական ռոմանակա-նացված ազնվական վերնախավի դեմ:

• • •

Մայրցամաքի հյուսիսային ափերը ողողում է Ատլանտյան օվկիանոսի մասը կազմող Միջերկրական ծովը՝ **Թունիսի** և **Սիդրա** ծովածոցերով: Ծովը Ատլանտյան օվկիանոսին կապված է **Ջիբրալթարի** նեղուցով(ամենանեղ մասում լայնությունը 14 կմ է), որն էլ իր հերթին Եվրոպան բաժանում է Աֆրիկայից: Ատլանտյան օվկիանոսի մաս է **Գվինեական** ծովածոցը, որը ողողում է մայրցամաքի արևմտյան ափերը:

• • •

Կղզիները և կղզեխմբերը զբաղեցնում են 1.1 մլն. քառ կմ տարածք: Մադագասկարը մայրցամաքից բաժանվում է Մոզամբիկի (ամենամեծ լայ-նությունը՝ 400 կմ) լայն նեղուցով: Հնդկական օվկիանոսի մեջ խորանում է **Սոմալի** թերակղզին(աֆրիկյան եղջյուր):

Վերոնշյալ աշխարհագրական օբյեկտները ցույց տվեք քարտեզի վրա:

Մայրցամաքի արևելյան մասով, գրեթե միջօրեականի ուղղությամբ ավե-լի քան 6000 կմ ձգվում է մոլորակի ցամաքի ամենաերկարաձգված՝ Արևե-լաաֆրիկյան մեծ բեկվածքների գոտին (Արևելաաֆրիկյան ռիֆտային հա-մակարգ, Աֆրիկայի «վերք», Աֆրիկայի «սպի»):

• • •

Աֆրիկան քրոմիտներով(համաշխարհային պաշարների մոտ 70%-ը, ՀԱՀ, Զիմբաբվե), բոքսիտներով(60%, 25մլրդ.տ Գվինեա 21 մլրդ. տ), մանգանով(մոտ 90% ՀԱՀ), երկաթաքարով, ոսկով, պլատինոիդներով, կոբալտով, վանադիումով, ալմաստով, ֆոսֆորիտներով(Մարոկկո, Թունիս,Ալժիր) ամենահարուստ մայրցամաքն է: Պղնձի (մոտ 170 մլն. տ ձուլածո պղնձի հաշվով, Կենտրոնական Աֆրիկա Զամբիա 54%, ԿԴՀ 36%, «**Կոպերբելտ**» պղնձագոտի),ասբեստի, ուրանի, ծարիրի, գրաֆիտի պաշարներով երկրորդն է, նավթի,գազի, երկաթաքարի պաշարներով՝ երրորդը: Հարուստ է նաև տիտանի,նիկելի, տանտալի,անագի, վոլֆրամի պաշարներով,թանկարժեք և տարբեր իրերի պատրաստման քարերով և այլն: